ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. /374010/ 287401, 2 25 22**
«_____» _____2020թ. N _____ **Ֆաքս/374010/ 28 18 32**

«TERT.AM» ԿԱՅՔԻ ԼՐԱԳՐՈՂ
ՀԱԿՈԲ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ասլանյան

Ի պատասխան ՀՀ Վայոց ձորի մարզպետին 2020 թվականի փետրվարի 26-ին հասցեագրված (մտից փաստաթուղթ՝ 1514, ամսաթիվ՝ 27.02.2020թ.) Ձեր հարցման՝ ներկայացնում ենք, որ պարգևավճարներն, ըստ պաշտոնների և հաստիքների, բաշխվածություն չեն ունենում, յուրաքանչյուր դեպքում գործում է առանձին մոտեցում՝ կախված կատարված աշխատանքի որակից և բովանդակությունից կամ գործում է մեկ միասնական համակարգ:

Ինչ վերաբերվում է հարցման մյուս կետերին, ապա հայտնում ենք, որ պահանջվող տեղեկատվությունը վերաբերվում է մարզպետարանի աշխատակիցների անձնական տվյալներին, որոնք չենք կարող տրամադրել, քանի որ կատարել ենք հարցում, սակայն չենք ստացել աշխատակիցների համաձայնությունը՝ իրենց տվյալները փոխանցելու համար: Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի՝ անձնական տվյալները (վարձատրության մասին տեղեկատվությունը), առանց տվյալների սուբյեկտի համաձայնության, չեն կարող տրամադրվել:

Недействительная подпись

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Իրավաբանական բաժին
Ն. Մաղաքյան, Հեռ. (0281) 2 55 95